ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆՅՈՒՌԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՀԱՅ-ՍԱՍԱՆՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(խաչադրոշմ կնիքներ եւ կնքադրոշմներ)

387 թ. Տիզբոնի դաշնագրով Հայաստանը բաժանվեց Բյուզանդական կայսրության եւ Սասանյան Իրանի միջեւ՝ սահման ունենալով Սրմանց կամ Բյուրակնյա լեռնաշղթան հյուսիսից-հարավ՝ Կարին-Մծբին ուղղությամբ: Սասանյան Իրանին անցավ Արշակունյաց Հայաստանի տարածքի մոտ 75%-ը: Հայաստանի մեծագույն մասն ընդգրկվեց Սասանյան քաղաքական-հասարակական, ընկերային-տնտեսական, մշակութային կյանքի ասպարեզ, սկզբում թագավորության (մինչեւ 428 թ.), ապա մարզպանության կարգավիճակով, հաղորդակցվեց դրանցում կատարվող բոլոր փոփոխություններին:

Գտնվելով երկու հակոտնյա տերությունների (Բյուզանդիա եւ Սասանյան Իրան) իրար կապող Արեւելքից-Արեւմուտք ձգվող ռազմավարական, տարանցիկ առեւտրաքարավանային, բնականաբար, եւ մշակութափոխանակային կարեւոր մայրուղիների հանգուցակետում, Հայաստանը եւ հայ մշակույթը հայտնվեցին շատ բարդ իրավիճակում, երբ օրվա խնդիր դարձավ մշակույթների այդ հոծ խառնարանում ոչ միայն դիմակայել, պահպանել ազգային դեմքն ու մշակութային ինքնությունը, այլեւ հաստատուն տեղ ապահովել հետագա մրցապայքարում: Հայ մշակույթը ոչ միայն հարստացավ նոր ձեռքբերումներով, այլեւ հարստացրեց Սասանյան մշակույթն արեւմտյան արժեքներով: Այսպիսով, Պարսկահայաստանը դառնում էր ոչ միայն քարավանային բեռներ ներմուծող եւ արտահանող, այլեւ մշակութային բոլոր կարգի նորամուծությունների եւ փոխազդեցությունների կրողն ու փոխանցողը:

Հայկական արքունական, ապա եւ մարզպանական միջավայրում գերակա էին Սասանյան պալատական կյանքի վարվելակարգը, կենցաղային նորմերն ու սովորույթները: Հայ իշխանական ընտրանին սերտ կապերի մեջ էր Սասանյան արքունիքի հետ, մասնակից նրա բոլոր տոնախմբություններին, հանդիսություններին ու պաշտոնական արարողություններին: Բնականաբար, նա եւս պետք է առաջնորդվեր Սասանյան արքունիքում կենցաղավարող նորմերով՝ պահպանելով վարվելակարգի բոլոր կանոնները: Սասան-

յան էթիկետը մշակել էր արքունական սանդուղքի տարբեր աստիճաններում գտնվողների համար նիստուկացի տարբեր նորմեր, հագուստի եւ հարդարանքի անհատական ուրույն հորինվածք, պատվական տիտղոսը հավաստող նշանակներ՝ համապատասխան տոհմադասային պատկանելությանը բնորոշ հատկանիշներով ու գինանշաններով: «Նա (Վասակը),- գրում է Եղիշեն, - ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն, կապէր եւ պատուաւորսն (պատիւ վարսին) եւ գիտցին ոսկեղէն, դնէր ի վերայ, եւ կռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով եւ ակամբ պատուականօք ընդ մէջ իւր ածէր, եւ զգինդսն յականջսն, զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբքն, եւ զամենայն օրէնս պատուոյն»[1]:

Սասանյան արքունիքի վարվելակարգը նկարագրող արաբ եւ պարսիկ պատմիչներն ու բանաստեղծները հիշատակում են, թե ցանկացած քաղաքացիական-հասարակական, քրմական-դատական կամ ռազմական պաշտոնում որեւէ մեկին հաստատելիս արքայից-արքան այդ պաշտոնային շնորհում էր ապագա իշխանության նշանակները. գլխարկ (կուլախ), ոսկե գոտի (կամար) եւ կնիք-մատանի (մուհր)[2]. «իսկ մարգարեն, թո՛ղ Ալլահը նրան օրհնի, իրավունք ունի մատին կրելու կնիք-մատանի, եւ այն նամակները, որ նա ուղարկում է երկրի տարբեր ծայրեր, պետք է կնքված լինեն այդ մատանիով»: Եթե արքայից-արքային ուղարկվող նամակը կամ որեւէ այլ փաստաթուղթ հաստատված չէր լինում ուղարկողի պաշտոնական կնիքով, արքայից-արքան խիստ բարկանում էր: Պատճառը, ըստ պատմիչների վկայությունների, հետեւյալն էր. - «Մի անգամ մարգարեն արքայից-արքային (Խոսրով Ը. Փարվեզին) հղած նամակը չէր կնքել անձնական պաշտոնական կնիք-մատանիով, եւ արքայից-արքան առանց այն բանալու պատռել էր՝ ասելով, թե նամակն առանց կնիքի նույնն է, ինչ գլուխն առանց խույրի, եւ նրա տերն իրավունք չունի մասնակցելու արքայական խորհրդաժողովներին»[3]: Կնիքն առաջին հերթին հոգեւոր եւ բարձրագույն իշխանության, գերակա իրավունքի խորհրդանիշ էր՝ ամրագրված համապատասխան նշանագիր-մատանիներով: Կնիքներ պատրաստում էին թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերից՝ կարկեհան, սեյլան, մեղեսիկ, որը կոչվում էր նաեւ «արքայական քար»[4], նոնաքար, ալմանդին, ագաթ, սարդիոն, լազուրիտ (լաջվարդ), հասպիս, հակինթ, քալցեդոն եւ այլն՝ տարբեր գույների եւ երանգների:

Սասանյան Իրանում ընդունված կարգ էր, որ արքայից-արքայի մատանին պիտի լիներ առանձնահատուկ, եզակի եւ չունենար նմանակը երկրի ողջ տարածքում: Միայն նրան էր վերապահված «կրել լուսաշող հակինթե եւ լազուր փիրուզե մատանիներ»: Փիրուզ նշանակում էր «հաղթանակ եւ այն կրողին պահպանում էր «չար աչքից» եւ վախի զգացումից՝ քնած ժամանակ»[5]:

Բացի վերոհիշյալ մատանիներից, ըստ Հ. Օրբելու դիտարկումների, պարսից արքայից- արքաները կրել են եւ վարազապատկեր մատանիներ՝ «այնտեղ (Սասանյան Իրա-

1 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երեւան, 1971, էջ 222:
2 Տես **А. Я. Борисов, В. Г. Луконин**, Сасанидские геммы, Л, 1963, էջ 22:
3 Անդ, էջ 10:
4 Տես **Б. Ф. Куликов**, Словарь камней-самоцветов, Л., 1982, էջ 26:
5 **А. Я. Борисов, В.Г. Луконин**, էջ 10:

նում) կնիքներն ունեին մեծ կիրառություն պետական կենցաղում. դրանցով էին կնքվում հրովարտակներն ու պաշտոնական բոլոր կարգի փաստաթղթերը, որոնք կրում էին վարազի պատկեր»[6]:

Նույնը հավաստում է եւ Մովսես Կաղանկատվացին. «Եւ արքայ արքայից (Շապուհ Բ., 309-379 թթ.) կոչէ առ ինքն զԲաբիկ եւ տայ վճիռ թագաւորական՝ կնքեալ վարազգիր մատանեաւ»[7]:

«Վարազգիր» կամ վարազապատկեր մատանիներ կրել են եւ Հայոց թագավորները, իբրեւ շնորհ-պարգեւ ստացած Սասանյան շահն-շահերից. «Եւ կնքեն զթուղթն վարազգիր մատանեաւ թագաւորին»[8]:

Վարազը Զրադաշտական հավատքում ամպրոպի եւ հաղթության աստված Վերեթրաղնայի (Վրեթագանա) իմաստիրդանիշն էր, իսկ զուտ պարսկական դիցաբանության մեջ կապվում էր երկնային եւ արեւային աստվածությունների հետ[9]:

Վարազ զարդապատկերը պատվական հարդարատարրերից էր Սասանյան կիրառական արվեստում (սկուտեղներ, գավաթներ՝ հարդարված արքայական որսի տեսարաններով)[10] եւ պետական հերալդիկ (զինանշանային) համակարգում:[11]

Հայաստանի պատմության թանգարանի սասանյան կնիքների հավաքածուի մեջ կա «վարազգիր» կնիք-մատանի (2197/3/2)՝ գտնված Դվին քաղաքի պեղումներից (նկ. 1):

Սասանյան վարչակարգը մշակել էր կնքաքարերի, ամեն տեսակ պետական ծառայությունները վավերացնող «նշանակ»-ների համակարգ՝ ընդունելի հսկայածավալ տերության բոլոր մարզերում: Ժ. դարի արաբ պատմիչ Ջահշիյարին հաղորդում է, որ Սասանյան հարստության հիմնադիր Արդաշիրն ունեցել է չորս կնիք, որոնց վրա փորագրված է եղել. զինվորականների համար՝ «Տոկունություն», հարկերի, ֆինանսների եւ շինարարության գծով՝ «Հաստատում եմ», փոստի՝ «Աճապարանք», իսկ դատական գործերի համար՝ «Արդարություն»[12]:

Սասանյան դատաստանագրքի հոդվածներից մեկում (ժամանակակից՝ քննարկվող կնիքներին) արձանագրված է՝ ֆինանսական պաշտոնյաների (hamarakar) եւ մոգպետների (magypat) պաշտոնական կնիքներն առաջին անգամ իրավական կարգավիճակ եւ կիրառություն են ստացել Կավադ արքայի հրամանով, իսկ դատավորների կնիքները՝ Կավադի որդի Խոսրով արքայի[13]:

Կնքաքարերի մշակությունն, անշուշտ, գտնվել է պետության վերահսկողության ներքո, քանզի կնքաքարով մատանի կրելու իրավունք ունեին թագավորները, բարձր եւ

6 **И. А. Орбели**, Избранные труды, Ереван, 1963, էջ 290:

7 «Մովսեսի Կաղանկատվուցւոյ Պատմութիւն Աղուանից Աշխարհի», Մոսկվա, 1860, հ. II, էջ 84:

8 Տե՛ս **Սարգիսաւոս Օրբէլեան**, Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 229:

9 Տե՛ս **Э. Ш. Хуршудян**, Армения и Сасанидский Иран, Алматы, 2003, էջ 285:

10 Տե՛ս **К. В. Тревер, В. Г. Луконин**, Сасанидское серебро, Собрания Гос. Эрмитажа, М., 1987, էջ 60, 62, նկ. 21, 22. էջ 108, S/16.24, иллю. 13/6:25/7:35/17:

11 Տե՛ս **Э. Ш. Хуршудян**, նշվ. աշխ. 285-286.

12 Տե՛ս **А. Я. Борисов, В. Г. Луконин**, էջ 10:

13 Տե՛ս **А. Г. Периханян**, Сасанидский судебник, Ереван, 1973, էջ 93, 4-9:

միջին իշխանական դասը, խոշոր առեւտրականները, հոգեւոր դասի բարձրաստիճան ներկայացուցիչները:

Մատանիներն, իբրեւ հարգի զարդ, հայտնի են տակավին հնագույն ժամանակներից: Կրել են հասարակության բոլոր շերտերը՝ համաձայն հասարակական դիրքի եւ կարողության:

Արեւելյան ժողովուրդների մեջ մատանիների վերաբերյալ պահպանվել է շատ հետաքրքիր եւ գեղեցիկ պատում: Դարսից մեծ բանաստեղծ Օմար Խայամը գրում է. «Մատանին ամենալավ զարդն է, վայելուչ մատին: Արքայազուններն ասում են. տղամարդ չէ նա, ով չի կրում մատանի, իսկ առաջինը, ով պատրաստել է մատանի եւ կրել, Ջամշիդն է: Արքայազնի մատն առանց մատանու նույնն է, ինչ բանակն առանց դրոշի, նույնն է, ինչ մեջքն առանց գոտու (իսկ վերջինս իր մեջ թաքցրած ունի մեծ խորհուրդ՝ բարձր իշխանություն: Միաժամանակ համարվել է հոլովական հուռութք): Արքայազնի նամակն առանց կնիքի՝ նշան է մտքի թուլության եւ ոչ լավ մտադրությունների, իսկ գանձարանն առանց կնիքի՝ նշան է անզգուշության եւ վատ պահպանվածության: Բոլոր զարդերը, որ ունեն մարդիկ, կարող են կրել կամ չկրել. միայն մատանին է, որ միշտ պետք է կրել»[14]:

Հայոց մեջ եւս մատանին նշանակ էր պատվո եւ մեծագույն հարգանքի: Ստեփանոս Օրբելյանը Գնդեվանքի կառուցումը Սուփա իշխանուհու կողմից համեմատում է մատանու հետ. «Մատանի էր անակն Վայոց Ձոր, շինեցի զսա եւ եդի ակն ի վերայ»[15]: Մատանին արքայական իշխանության խորհրդանիշ էր. «Եւ կնքեալ թագաւորն արքունի մատանեաւ»[16], «Եւ հանեալ զնոսա անտի՝ տայ զմատանի ի ձեռս Աշոտոյ եւ տիրեցուցանէ սեփական ժառանգութեանն»[17]:

Հայաստանյան գտածո կնիքներն ու կնքադրոշմները բավականին մեծաքանակ են՝ հարդարված որսի, ռազմի տեսարաններով, կենդանիների եւ գազանների պատկերներով (արջ, առյուծ, ոչխար, սապատավոր ձի, եզ, եղնիկ, եղջերու եւ այլն), թռչնազարդերով (արծիվ, փասիան, աղավնի, արագիլ, կռունկ), բուսական եւ երկրաչափական զանազան զարդապատկերներով ու հարդարատարրերով, սարդակերպերով (կարիճ), հազվադեպ՝ մարդկային դիմապատկերներով ու արձանագրություններով: Գտածոներում հանդիպում են եւ խաչապատկեր-կնիքներ ու կնքադրոշմներ:

Արդեն Դ. դարում ողջ քրիստոնյա աշխարհում խաչն ընկալվում էր որպես նոր հավատքի՝ քրիստոնեության պաշտոնական խորհրդանիշ, Քրիստոսի նշանակ:

Նույնը իրողություն էր եւ հայկական պաշտոնական ծիսական արարողակարգում: Խաչը, կարելի է ասել, Հայ Առաքելական Եկեղեցու, հայոց հավատքի հիմնաքարն է. «Իսկ խաչն լուսաւոր ի նմանէ ինքն մեծ քահանայապետութիւնն ի մէջ ժողովրդոցն օրինակ Քրիստոսի պատկերին մարմնացելոյ քահանայապետութեանն օծութեան Աստուածորդոյն»[18]:

---

14 **А. Я. Борисов, В. Г. Луконин,** с. 10.

15 **Ստեփանոս Օրբելյան,** էջ 202:

16 **Մովսես Կաղանկատուացի,** Թիֆլիս, 1912, էջ 89:

17 «Թովմայի վրդ. Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1887, էջ 445:

18 **Արշակ Տէր-Միքէլեան,** Հայաստանեաց Սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Տփղիս, 1900, էջ 524:

Սասանյան կնիքների եւ կնքադրոշմների վրա խաչի պատկերումը, անշուշտ, զուտ զարդապատկեր չէ. այն ունի մասնավոր բովանդակություն եւ կարող է ընկալվել. ա. շնորհվել է քրիստոնյա բարձրաստիճան հոգեւորականի կամ էլ նույն դավանանքի բարձրադաս աշխարհիկ պաշտոնյայի. բ. զրադաշտականության հաղթանակը քրիստոնեության նկատմամբ:

Չի բացառվում, որ խաչապատկերը լրացվել է հետագայում, կրողի ցանկությամբ՝ շեշտելու քրիստոնյա լինելը:

Համաձայն ընդունված կարգի՝ քրիստոնյաներին տրվող պաշտոնական (զինվորականների, քաղաքացիական պաշտոնյաների) կնիքների վրա դրոշմում էին «նշանի», իսկ հոգեւոր նվիրապետների կնիքների վրա՝ խաչեր[19]:

Սասանյան միօրինականացված պատկերագրության պարագայում բացառվում էր կնքաքարերի մշակման գործընթացում առանձին քրիստոնեական ուղղվածության միտումը: Իրավացի է Լուկոնինը, երբ նկատում է, թե նույն փորագրիչը օգտագործելով կիրառվող ընդունելի կանոնները, կարող էր փորագրել եւ քրիստոնեական թեմաներ, խորհրդանշաններ, ըստ ստացված պատվերի, եւ զրադաշտական խորհրդանշանները լրացնել քրիստոնեական նշանակներով[20]:

Խաչապատկեր կամ խաչադրոշմ կնիքները մեր հավաքածուներում փոքրաթիվ են: Ուշագրավը մի քանիսն են: Դրանցից առաջինը գտնվել է Էլառում[21]: Այն սպիտակավուն ապակե մածուկով ուլունք է (2246/106), խոշոր անցքով, բոլորշի իրանով: Կենտրոնում խաչապատկերն է, աջ եւ ձախ կողմերում՝ եղեւնազարդեր, փորագիր՝ կապարված նրբագիծ-սրվերագծի հնարանքով: Վերաբերում է Սասանյան ժամանակներին՝ Ե.-Զ. դդ.: Կարելի է ենթադրել, թե պատկանել է ցածրադաս քրիստոնյա պաշտոնյայի: Այդ են հավաստում կնքաքը (ապակե մածուկ) եւ պարզունակ հարդարանքը (նկ. 2):

Գիպական տեսանկյունից եզակի եւ առանձնահատուկ զարդ է 1959 թ. Երեւանի տարածքից շինաշխատանքների ժամանակ պատահաբար գտնված ոսկե կնիք-մատանին (քաշը՝ 19,5 գ)[22], որը, շնորհիվ հայերեն արձանագրության եւ սասանյան կնքարվեստին բնորոշ հարդարանքի, կարող է մեծ հետաքրքրություն ներկայացնել գիպական շրջանակներում: Մատանին ունի բարձր բոլորաձեւ ակնաբուն, դեպի ակնաբուն մտնող ուռուցիկ միակերտ պատեր: Ակնաբնում գետեղված է միջին մեծության կարմրավուն քար (ոչ շատ թափանցիկ, փայլատ): Հիշեցնում է նոնաքար: Սակայն, նկատի ունենալով քարի կարծրությունը, կարող ենք ենթադրել, որ այն պատկանում է միջնադարյան հայ մատենագրության մեջ բազմիցս հիշատակվող «լալ», «կարկեհան», «սուտակ», «յախուտ» թանկարժեք քարերի դասին:

Ակնաքարին առանձին շուք է հաղորդում այն հարդարող թռչնազարդը՝ փասիան

19 Տե՛ս **Э. Ш. Хуршудян**, **Н. Акопян**, Сасанидский золотой перстень с геммой на древнеармянском (V-VII вв.). «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», XVIII, Երեւան, 1999, էջ 185:

20 **В. Г. Луконин**, Древний и раннесредневековый Иран, М., 1987, էջ 200-201:

21 Տե՛ս **Է. Խանզադյան,** Էլառ-Դարանի, Երեւան, 1979, էջ 136, նկ. 147:

22 Մատանին գտնվում է մասնավոր մարդկանց մոտ եւ ներկա պեղը հայտնի չէ:

կամ աղավնի, կտցին՝ ճյուղ, փորագրված նրբագիծ-սրվերագծի հնարանքով: Թռչնի թեւերը փակ են, կիպ կպած իրանին, պոչը լայն բացած, զարդարուն, գլուխը վեր ցցած, գլխին՝ «պատվո եւ քաջության» նշանակ ժապավենը: Ակնաքարը եզրագծում է հայերեն արձանագրությունը: Գրությունն սկսվում է խաչպատկերի ձախ կողմից.

Ա[Ի]ԳՆՈՒԹԻՒՆ ԻՆՁ Ի + [Խաչէ]

Խաչանշանը հայերեն խաչ բառի գաղափարագիրն է: Թվագրվում է Զ.-Է. դդ. (նկ. 3)[23]:

Խաչապատկեր կամ խաչադրոշմ մյուս կնիք մատանին (ոսկե) պահվում է Էրմիտաժում (Ս. Պետերբուրգ): Առաջին անգամ հրատարակել է Վ. Գ. Լուկոնինը: Սակայն նա ոչինչ չի նշում կնիք-մատանու գտնվելու հանգամանքների եւ տեղավայրի վերաբերյալ[24]:

Մատանին ուռուցիկ կողերով, շրջանաձեւ ակնաբնով զարդ է: Ակնաբունը եզերում է տափակ ժապավենաձեւ եզրաշերտը: Ակնաբնում տեղադրված է լաջվարդե կնքաքար՝ հարդարված փորագիր (նրբագիծ-սրվերագիծ) առյուծապատկերով, մեջքից քիչ վեր՝ խաչազարդ դրոշմ: Առյուծի գլուխը զարդարում է շքեղ բաշը, կանգնած դիրքում է, ձախ թաթը՝ առաջ գցած, պոչը՝ վեր ցցած, հպարտ ու զորավոր:

Վ. Լուկոնինը կնիքը թվագրում է Ե.-Է. դդ..[25] վերագրելով ուշ Սասանյան ժամանակներին՝ շեշտելով, որ քննարկվող դարերում Սասանյան Իրանում փորագրական արվեստն անկում էր ապրում, եւ նրան բնորոշ էր ոչ կատարյալ հորինվածքը: Պատվիրատուն կամ ում համար որ պատվիրվել է, եղել է, անշուշտ, քրիստոնյա բարձրաստիճան հոգեւորական, քանզի խաչադրոշմ կնիք-մատանիներ կրելու իրավունք ունեին միայն քրիստոնյա հայրապետները:

Ղազար Փարպեցին վկայում է, որ Հայոց Հայրապետ Գրիգոր Լուսավորիչը, իբրեւ բարձրագույն հոգեւոր իշխանության խորհրդանիշ, կրում էր խաչպատկեր մատանի. «Եւ դիր զմատանին, զգծած խաչի քո, ի մատին աջոյ ձեռին»[26]:

Սույն պարագայում չի բացառվում, որ կնիք-մատանին պատվիրվել է.

ա) բարձրաշխարհիկ անձնավորության պատվերով «Եւ ես Բաբգէն Հայոց կաթողիկոս եւ ամենայն եպիսկոպոսունք եւ Վարդ Մամիկոնեան գրեցաք հայերէն եւ պարսկերէն, եւ կնքեցաք մերով մատանեաւ»[27],

բ) շնորհ-պարգեւ է պարսից արքայից-արքայի, քրիստոնյա բարձրաստիճան պաշտոնյայի, նշան պարսից արքունիքում ունեցած մեծագույն դիրքի ու հեղինակության: Այդ է ցուցում խաչի երկրորդական, ոչ առաջնային դիրքը: Կենտրոնում առյուծապատկերն է:

Իրողություն է, որ Հայոց իշխանական տոհմերից Բագրատունիների տոհմական պաշտոնական զինանշանը առյուծն էր[28]:

Կարծում ենք, որ կնիք-մատանին պատկանել է Սմբատ Բագրատունի «բազմա-

23 Տե՛ս **Э. Ш. Хуршудян, Н. Акопян**, էջ 186:

24 Տե՛ս **В. Г. Луконин,** Искусство Древнего Ирана, М., 1977, էջ 158:

25 Անդ, էջ 158:

26 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1907, էջ 134:

27 «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 47:

28 Տե՛ս **Ռ. Մաթեւոսյան**, Հայկական զինանշաններ (Բագրատունիներ, Զաքարյաններ, Մամիկոնյաններ), Երեւան, 1994, էջ 22:

հաղթ, փաղանդավոր զորավար, ազդեցիկ քաղաքական գործչին», որը պարսից արքունիքում Խոսրով Փարվեզի մոտ պետական ծառայող էր: Նա վարել է Վրկանաց աշխարհի (607 թ.) եւ Հայաստանի մարզպանի պարտականությունները եւ կրել է «Տերանց զինվոր պատվանունը»[29]:

Նրա հոգածությամբ է վերակառուցվել Դվինի Ս. Գրիգոր Մայր եկեղեցին, ավերակված 572 թ. ապստամբական շարժումների ժամանակ պարսից զինվորների կողմից:

608 թ. նա եւ է կանչվում Պարսկաստան, կրկին նշանակվում Վրկանաց աշխարհի մարզպան: Քաջագործությունների, անբասիր վարքագծի եւ օրինակելի ծառայության համար Խոսրով Փարվեզը նրան շնորհում է Խոսրով Շում (Խոսրովի ուրախություն) պատվանունը. «Յայնժամ տայ նմա արքայ զտանուտէրութիւն որ անուանեալ կոչէր Խոսրով Շում, զարդարէ ի չքնաղս, ի գտակ եւ ի պատմուճան բեհեզեայս յոսկւոյ ասեալ, մեծացուցանէ ահագին պատուաւք ի ճամբար (վարսակալ), ականակապ եւ ի գումարտակ եւ ի գահս արծաթիս, արձակուի նա վաճառն, փոքր զդիւան աշխարհին»[30], «պատուով մեծացուցանէ ի վերայ քան զամենայն մարզպանս իւրոյ տէրութեան»[31]:

Հնարավոր է, որ այդ ժամանակ պարսից արքայից ստացել է այդ մատանին, որպես մարզպան եւ պետական հարկահավաքության բարձր պաշտոնյա (դիւան):

Նմանատիպ մեկ այլ մատանի պահվում է Բրիտանական թանգարանում: Հրատարակել է Պ. Հորնը[32]:

Իրավացի է Բ. Առաքելյանը[33], երբ գրում է, թե աշխարհի թանգարաններում ի պահ դրված սասանյան կնիքների հավաքածուներում կան հայկական եւ ասորական կնիքներ, որոնք կրում են հայկական կամ ասորական անուններ, քրիստոնեական նշաններ եւ թեմաներ. «Դանիելը առյուծների գբում», «Սողոմոնի դատաստանը», «Աբրահամի զոհաբերությունը»: Խաչապատկերներ. հրեշտակ՝ խաչապատկեր գավազանը ձեռքին, զոհաբերություն խաչի նշանով եւ այլն:

Պրոֆ. Ա. Բորիսովը "Эпиграфические заметки" հոդվածում գրում է, թե դրանք կարող էին պատկանել կամ քրիստոնեություն ընդունած պարսիկների, կամ, որ ավելի հավանական է, Սասանյան մեծածավալ տերության քրիստոնյա հպատակների[34]:

Կնիքաքարերից վերջինը (125/20) պահվում է ՀՊ թանգարանում: Կնիքը ձեռով ձվածիր է, քարը՝ ագաթ, գույնը՝ մուգ հոնի:

Քարի կենտրոնում սապատավոր արջառի (եզ) փորագիր պատկերն է (նրբագիծ-սպվերագիծ)՝ խոշոր սապատով, ոտքերն առաջ գցած, քայլքի պահին, ագին երկար, մարմնով ոչ շատ խոշոր, պոզերը՝ փոքր եւ թեք, պոզերի մեջտեղում՝ մազափունջ: Սապատից ձախ՝ մեջքի վրա, ուռուցիկ հավասարակող խաչապատկեր, նույնը՝ ծնոտի տակ, առջեւի ոտքերի դիմաց:

---

29 Տե՛ս **Ռ. Մաթեւոսյան**, Բագրատունիներ. «Անահիտ», 1997, էջ 15:

30 «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երեւան, 1979, էջ 101:

31 Անդ, էջ 99:

32 Տե՛ս **P. Horn**, Sassanidische Gemmen ans dem British Musseum, Z, D, M, G 44, էջ 457:

33 Տե՛ս **Բ. Առաքելյան**, Հայկական պատկերաքանդակները, IV-VII դդ., Երեւան, 1949, էջ 16:

34 Տե՛ս **А. Я. Борисов**, Антропологические заметки, Труды , т. 1, 1939, էջ 238-241:

Արջառը տնտեսության մեջ ունեցած աշխատանքային շատ կարեւոր գործառույթով հարգի տոտեմներից էր՝ վերածված կնքազարդի եւ մեծ տարածում ուներ Սասանյան կնքահարդարանքում: Համաձայն հարդարանքի բովանդակության՝ կնիքը կարող էր պատկանել քրիստոնյա խոշոր հողատիրոջ, քանզի կնիքները, ըստ Մ. Մաքսիմովայի, «միաժամանակ անձնական գույքի նկատմամբ սեփականատիրական իրավունքի գրավական էին»[35]:

Կնիքը փորագրության հնարանքով, սխեմատիկ է, ոչ կատարյալ եւ վերաբերում է ուշ սասանյան ժամանակներին՝ Ե.-Է. դդ.: Ունի բազում աղերսներ Սասանյան կնիքների հավաքածուներում[36]: Խաչապատկեր կնիքների դասին կարելի է վերագրել եւ Դվինում գտնված ոսկե գեղակերտ խաչը (ՀՊԹ, 1206, քաշը՝ 13,3 գ), ակնաբնում՝ բաց մանուշակագույն քարե կնիք (մեղեսիկ), Սասանյան կնքահարդարանքին ու զարդարվեստին բնորոշ արծվապատկերով (նկ. 6): Արծիվը սասանյան կնքահարդանքի պատվելի թռչնազարդերից էր, սրբագործված հնուց ի վեր: Այն աստվածների (երկնքի, արեւի, կրակի եւ լույսի) խորհրդանիշն ու սուրհանդակն էր: Արծիվը միաժամանակ աշխարհիկ բարձրագույն իշխանության խորհրդանիշն էր, համարվում էր արքայական թռչուն եւ արքայական խորհրդանիշ[37]:

Արծիվը հայ իրականության մեջ նախարարական տներից մի քանիսի տոհմական գինանշանն էր, պատվո նշանակը՝ Մամիկոնյաններ, Օրբելյաններ, Խաղբակյաններ[38]:

Խաչը, ակներեւաբար, պատկանել է իշխանական բարձրադաս պաշտոնյայի, որի տոհմական պատվո նշանակը արծիվն էր: Փավստոս Բուզանդը վկայում է, որ Մամիկոնյանների նախարարական գինանշանը արծիվն էր. « նշանք է արծու»[39]: Կարելի է ենթադրել, թե խաչ-կնիքը կրել է Մամիկոնյանների տան ներկայացուցիչներից մեկը՝ բարձրաստիճան հոգեւորական կամ աշխարհական, քանզի Մամիկոնյանները մեծ դերակատարություն ունեին Հայաստանի ռազմաքաղաքական կյանքում:

Խաչը պատրաստվել է տեղում, այդ է փաստում ինքնատիպ հորինվածքը, իսկ կնքաքարը մշակվել է Սասանյան արքայական արհեստանոցներից մեկում: Թվագրվում է Է. դ.[40]:

Խաչպատկերները ձեւով համեմատելի են Ե.-Է. դդ. քրիստոնեական պատկերագրության մշակած խաչանշանների հորինվածքին եւ չունեն մասնավոր տարբերակիչ տարրեր պատկանելության վերաբերյալ: Խաչերի նման հորինվածքն ընդունելի եւ կիրառելի էր վաղ միջնադարյան Հայաստանում եւս. Աղց, Երերույք, Քասախ, Էջմիածին, Ազարակ, Դվին, Օշական, Թալին եւ այլուր:

---

35 **М. И. Максимова**, Геммы из некрополя Мухеты-Самтавро (раскопки 1938/39 гг.). Вестник музея Грузии, т. XIV-XV, с. 238-239.

36 Տե՛ս **E. Khuršudian**, Die Sasanidische gemme samm lung des Stats museums für die geschichte Armeniens. Archaeologische mitteilungen aus Iran, band 28, 1995-1996, Dietrich Reimer Verlag Berlin, taf 25-9; 27-15.

37 Տե՛ս **Ժ. Խաչատրյան**, Արծվի տարբեր հորինվածքով կնքադրոշմներ, գեմաներ եւ քանդակներ. ՊԲՀ, 2003,թ. 2, 2003, էջ 166-167:

38 Տե՛ս **Ռ. Մաթեւոսյան**, Հայկական գինանշաններ, նկ. 46, 48-51, 54-57, 59-61:

39 «Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 104:

40 Տե՛ս **Ն. Հակոբյան**, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը (Թ.-ԺԳ. դդ.), Երեւան, 1981, էջ 32, աղ. IV-1:

Խուչապրոշմ կնքապրոշմներ. կավե գնդիկներ են, որոնք խոնավ եւ փափուկ վիճակում թելերով կապվում էին[41] համապատասխան փաստաթղթերի (հրովարտակներ, հրամաններ, վճիռներ, հղումներ եւ այլն) փոստային առաքումների, առեւտրական հակերի վրա, ապա կնքվում-դրոշմվում պաշտոնական կնիք-մատանիներով. «Քարավանը պատրաստ է լքելու քաղաքը: Հակերն արդեն բեռնված են ուղտերին...: Մի քանի հարուստ վաճառականներ պետական պաշտոնյաների ներկայությամբ կնքում են հակերն իրենց կավե գնդիկներով, դրոշմված՝ այծի, արագիլի, առյուծի պատկերներով եւ տարօրինակ (անսովոր) մենագրերով: Պետական պաշտոնյան, լրացուցիչ ստուգելով հակերի պարունակությունը, դրանք կնքում է պետական արձանագիր կնիքով: Այժմ կարելի է մեկնել»[42]:

Կնքադրոշմը չորանալուց հետո այն կրող փաստաթուղթը մտնում էր ուժի մեջ, ստանալով իրավական կարգավիճակ, քանզի կնքադրոշմը չոր վիճակում կեղծել հնարավոր չէր:

Կնքադրոշմը անձի ինքնուրոյնությունը հաստատող կավե վկայական-գրավականն էր:

Ֆիրդուսին հետաքրքիր տեղեկություն է հայտնում Շապուհ Բ.-ի՝ հռոմեական գերությունից փախուստի վերաբերյալ. «Արքայից-արքան (Շապուհ Բ.) այգեպանից խնդրում է փափուկ մի կավագունդ, կնքում անձնական՝ արքայական մատանիով եւ խնդրում այգեպանին այն ուղարկել Պարսից Մոգպետաց Մոգպետին: Վերջինս, տեսնելով կնքադրոշմը, ուրախանում է եւ ժողովրդին հայտնում, թե արքայից-արքան ողջ է»[43]:

Սասանյան դատաստանագրքի հոդվածներից մեկում արձանագրված է. «Եթե նա հայտարարում՝ այդ փաստաթուղթը ես հանձնում եմ քեզ», ապա այդ հայտարարությամբ նրան տրվում է եւ կնիքը (կավը) եւ փաստաթղթի գրավոր տեքստը: Այլ կերպ ասած, «փաստաթուղթ» բառի տակ պետք է հասկանալ գլխավոր տեքստի եւ կնիքի միասնությունը[44]:

Կնքադրոշմներ պատրաստում էին հատուկ կավատեսակներից, հաճախ օրգանական որոշակի նյութերի՝ օր. կարժառի (тальк) խառնուրդով: Ժ. դարի արաբ պատմիչ Մուկադասին տեղեկացնում է Խորասանում «հատուկ» կավատեսակի հանույթի մասին[45], որն օգտագործվում էր կնքադրոշմ պատրաստելու համար: Այս կավատեսակներից պատրաստված կնքադրոշմներն ունեին, ի տարբերություն Հայաստանում գտնվածների, փայլուն, ողորկ մակերես, պինդ էին, քանզի կավը շուտ էր չորանում եւ պնդանում:

Հայաստանում եւս կնքադրոշմները պատրաստել են «հատուկ» կավատեսակնե-

41 Տե՛ս **Հ. Հ. Կալանտարյան,** Раннесредневековые буллы Двина, А.П.А., 13, Ереван, 1982, էջ 16, **Dietrich Huff**, Technological observations on clay bullafrom Takh-I Suleiman. "Mesopotamia", XII, 1987, taf. 380, fig. C, 1-2: 382, fig. D. 1-4: 348. fig. E. 385. fig. F.

42 **Գ. Վ. Կինժալով, Վ. Գ. Լուկոնին**, Памятники культуры Сасанидского Ирана, Л., 1960, с. 18.

43 **Ա. Յա. Բորիսով, Վ. Գ. Լուկոնին**, с. 11.

44 Տե՛ս **Ա. Գ. Պերիհանյան**, Сасанидский судебник, Ереван, 1973, էջ 408, А. 34. 2-3:

45 Տե՛ս **Գ. Ա. Պուգաչենկովա**, Оттиски парфянских печатей из Нисы, ВДИ, N 4, 1954, էջ 160:

ից[46], որոնք օժտված էին բարձր առաձգականությամբ, դյուրամշակ էին եւ չորանալուց հետո արագ պնդանում էին:

Խաչադրոշմ կնքադրոշմները հայտնի են առավելապես Դվինի պեղումներից (թվով յոթը) եւ պատկանել են հասարակական-դասային տարբեր կարգավիճակներ ունեցող անձանց՝ պատճենահանված նրանց պաշտոնական կնիքներից: Ի տարբերություն իրանական ծագում ունեցող կնքադրոշմների՝ սրանք անփայլ են, քիչ թխավուն, կավը խոշորահատիկ է եւ չեն կրում պահլավերեն արձանագրություններ, բացառությամբ մեկի՝ 2197/313 կնքադրոշմը (20 կնիքով) կրում է երկու խաչանշան դրոշմ, որոնցից մեկի վրա պահլավերեն արձանագրություն է: Ա. Քալանթարյանը ենթադրում է, որ այն պատկանել է ոչ քրիստոնյա բարձրաշխարհիկ անձնավորության կամ քրիստոնյայի, որը, քաղաքական տարբեր նկատառումներից ելնելով, կնիքի վրա դրոշմել է օտարալեզու արձանագրություն[47]:

Վ. Լուկոնինը կարծում է, որ նման կնքադրոշմները առեւտրական գործարքների արգասիք են[48]:

Խաչապատկեր կնիքների խմբում առանձնանում է մեկը, որը կավե շրջանաձեւ գնդիկ է, կենտրոնում՝ «niša» - նշան խորհրդանշանը, վերեւում կիսալուսին խաչապատկերով: Կնքադրոշմը կրում է YS[ty] - «արդարություն» արձանագրությունը: Կնքադրոշմն, անշուշտ, ունի սասանյան ծագում եւ պատկանել է դատական պաշտոնյայի, քանզի նրանց կնիքներն էին կրում «Արդարություն» բառը[49]:

Հետագայում անցնելով քրիստոնյաների ձեռքը, հավանաբար, դարձյալ դատական ծառայողի, լրացվել է խաչանշանով՝ այս կերպ ոչնչացնելով զրադաշտական բովանդակությունը:

1. Պետ. Էրմիտաժի հավաքածուներում խաչանշան կնիքները եզակի են: Հայտնի օրինակներից մեկը Քսար-ի Աբու Նասրից է (Դ.-Ե. դդ.), որտեղ գործում էր նեստորական աշխույժ առեւտրական գաղութ, եւ բացառված չէր նեստորականների մասնակցությունը առեւտրական գործարքների վավերացմանը: Նեստորական պատկանելության խաչադրոշմ կնիքներ եւ կնքադրոշմներ հայտնի են շատ վայրերից[50], սակայն դրանք մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս են:

2. Խաչանշան կնիքներն ու կնքադրոշմները Հարավային Կովկասում հազվադեպ հանդիպող գտածոներից են: Առ այսօր դրանք չունեն անձնավորված բնորոշում, որը, կարծում ենք, կնիքագիտության գլխավոր, անլուծելի խնդիրն է եւ կարիք ունի հատուկ մասնագիտական ուսումնասիրության:

---

46 Տե՛ս **А. А. Калантарян**, էջ 50:

47 Տե՛ս **Ա. Ա. Քալանթարյան,** Սասանյան կնքադրոշմների եւ դրանց կիրառական որոշ կողմերի մասին. ՊԲՀ, 1977, թ. 3, էջ 202, նկ. 2:

48 Տե՛ս **А. Я. Борисов, В. Г. Луконин**, էջ 42:

49 Տե՛ս **А. Г. Периханян**, էջ 93, 4-9:

50 Տե՛ս Catalogue of the Western Asiatic Seals in the British Museum. Stamp seals II: The Sassanian Dynasty By A.D.N. Bivar, Published by the trustess of the British Museum, London, pl. 29-8, p. 425, 71, p. 656, no. 35 (521). Der Sasanidische Siegelkanon Von Robert Göbl. Klinkbardt. Biermann-Braunschavelg, 1973, Wurzbourg, 102a, 102a-PB, 102a-L/NA, 1, 102a-HS/587. 102/HS/603, Cafel 33.l. 1-1a: